



**ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԿԱՐԾԻՔ, ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ
«ԱՊՕՐԻՆԻ ԾԱԳՈՒՄ ՈՒՆԵՑՈՂ ԳՈՒՅՔԻ ԲՈՒՆԱԳԱՆՁՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՑՄԱԼ**

ՀՀ արդարադատության նախարարության կողմից շրջանառության մեջ դրված «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի և (*այսուհետ՝ Նախագիծ*) կից ներկայացված այլ նախագծերի¹ առնչությամբ Իրավաբանների հայկական ասոցիացիայի (այսուհետ՝ ԻՀԱ) և Հայաստանի ՔՀԿ-ների հակակոռուպցիոն կոալիցիայի (այսուհետ՝ Կոալիցիա) նկատառումները հանգում են հետևյալին:

**I. ԱՊՕՐԻՆԻ ԾԱԳՈՒՄ ՈՒՆԵՑՈՂ ԳՈՒՅՔԻ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԲՈՒՆԱԳԱՆՁՄԱՆ
(in-rem) ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐԸ՝ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՓՈՐՁԻ ԼՈՒՅՄԻ ՆԵՐՔՈ**

Նախ պետք է նկատի ունենալ այն իրողությունը, որ առանց մեղադրական դատավճռի գույքի բռնագանձումը լայն տարածում ստացած իրավակարգավորում է հանդիսանում արտասահմանյան երկրներում: ՄԱԿ Կոռուպցիայի դեմ կոնվենցիան իր մեջ դրույթներ է պարունակում քաղաքացիական հայց հարուցելու միջոցով ակտիվները վերադարձնելու վերաբերյալ: Եվրոպական միությունը ևս այս առնչությամբ 2014թվականի ապրիլի 3-ին ընդունել է թիվ 2014/42/ հրահանգը, որն իր մեջ դրույթներ է պարունակում ապօրինի ձեռք բերված ակտիվները քաղաքացիական հայցի միջոցով վերականգնելու վերաբերյալ:²

Հատկանշական է, որ քաղաքացիական հայցի միջոցով ակտիվների վերադարձ իրականացնելիս մեղադրական դատավճռի առկայությունը պարտադիր պայման չէ գույքը բռնագանձելու համար: Բավական է միայն, որ վարույթ իրականացնող մարմինը կարողանա

¹«Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» ՀՀ օրենքի նախագիծը և կից ներկայացված այլ նախագծերը հասանելի են այստեղ. <https://www.e-draft.am/projects/1931>

² Նշյալ հրահանգը հասանելի է հետևյալ հղմամբ. <https://eur-lex.europa.eu/legal-content/EN/TXT/PDF/?uri=CELEX:32014L0042&from=EN>

ապացուցել գույքի քրեական հանցագործություն կատարելու կամ ապօրինի հարստացման միջոցով ձեռքբերելու հանգամանքը:

Միջազգային պրակտիկայի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ.

- **Որպես վարույթ հարուցող մարմին հիմնականում հանդես է գալիս դատախազությունը**, որը սկզբնական փուլում անհրաժեշտ տեղեկություններ է հավաքում՝ գույքի՝ հանցագործության կամ ապօրինի հարստացման միջոցով ձեռք բերված լինելու փաստերի վերաբերյալ, որից հետո քաղաքացիական հայց է ներկայացնում դատարան:
- Դատական գործընթացի սկզբնական փուլում **ապացուցման պարտականությունը կրում է հայցվորը (մեծամասամբ դատախազությունը)**: Եթե մեղադրող կողմին հաջողվում է անհրաժեշտ ապացույցներ ներկայացնել, ապացուցման պարտականությունը դրվում է պատասխանող կողմի վրա: Այս փուլում պատասխանող կողմը պարտավորվում է ապացուցել իրեն պատկանող ակտիվների օրինականությունը: Հարկ է նշել, որ վարույթն իրականացնող մարմնի կողմից քաղաքացիական դատավարության շրջանակներում ապացուցման պարտականությունը in rem բռնագանձման հայցերի պարագայում անհամեմատ ավելի նվազ է, քան քրեական վարույթի պարագայում: Եթե քրեական վարույթի ընթացքում գործում է «**Ողջամիտ կասկածի**» սկզբունքը (**beyond reasonable doubt**), ապա in rem բռնագանձման դեպքում գործում է «**Հավանականությունների հավասարակշռում**» (**balance of probabilities**) սկզբունքը, ինչը իրենից ենթադրում է, որ դատարանում «հաղթելու է» այն վարկածը, որի իրական լինելն ավելի հավանական է թվալու դատարանի համար:

Այն անձը, ում իրավունքները բռնագանձման դեպքում կարող են խախտվել, դատական պաշտպանության իրավունք ունի: Եվրոպական միության կարգավորումների համաձայն՝

- *Անդամ պետությունները պետք է անհրաժեշտ միջոցներ ձեռնարկեն, որպեսզի ակտիվները արգելանքի տակ վերցնելու որոշումը հնարավորինս շուտ ծանուցվի ակտիվները տնօրինող անձին: Նման փաստաթուղթը պետք է հակիրճ կերպով թվարկի ակտիվները արգելանքի տակ վերցնելու պատճառները:*
- *Արգելանքի տակ պահելու որոշումը կարող է կիրառվել այն ժամանակ, երբ ակտիվների վերջնական բռնագանձումը իրատեսական է համարվում:*
- *Անդամ երկրները ակտիվները տնօրինող անձին պետք է հնարավորություն ընձեռեն ներպետական օրենսդրությանը համապատասխան բողոքարկելու ակտիվների արգելանքի տակ գտնվելու որոշումը:*

- Արգելանքի տակ գտնվող գույքը, որը վերջնականապես չի բռնագանձվում, պետք է անմիջապես վերադարձվի սեփականատիրոջը:
- Անդամ երկրները պետք է անհրաժեշտ միջոցներ կիրառեն, որպեսզի բռնագանձում տարածելու վերաբերյալ որոշումը պատճառաբանված լինի, իսկ որոշումը արդյունավետ կերպով ծանուցվի ակտիվները տնօրինող անձին:
- Անդամ երկրները պետք է անհրաժեշտ քայլեր ձեռնարկեն որպեսզի, այն անձը, ում տնօրինության ներքո գտնվող ակտիվները բռնագանձելու որոշում է կայացվել, հնարավորություն ունենա այդ որոշումը դատարանում բողոքարկելու:
- Անձը, ում տնօրինության ներքո գտնվող գույքը բռնագանձվել է, բռնագանձման վարույթի ընթացքում պետք է իրավաբանական օգնության իրավունք ստանա: Վարույթ իրականացնող մարմինը պարտավոր է տվյալ անձին տեղեկացնել իրավաբանական օգնություն ստանալու իրավունքի մասին:
- Անձը, ում իրավունքները բռնագանձման որոշումից կարող են սահմանափակվել, պետք է հնարավորություն ստանա վիճարկել գործի հանգամանքները, ներառյալ հատուկ փաստերը և ապացույցները, որոնք առնչվում են այն պնդման հետ, թե նշյալ գույքը ձեռք է բերվել քրեական հանցագործության հետևանքով:
- Երրորդ անձինք պետք է իրավունք ունենան սեփականության իրավունքի տիրապետման հայց ներկայացնել, ներառյալ ուզուֆրուկտի իրավունք ունենալու վերաբերյալ (ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 217.2 հոդվածի համաձայն կողմերի համաձայնությամբ պայմանագրի հիման վրա անշարժ կամ շարժական գույքը կարող է ծանրաբեռնվել այնպես, որ անձը, հոգուտ որի կատարվել է այդ ծանրաբեռնումը, իրավունք ունենա տիրապետելու և օգտագործելու գույքը և դրա օգտագործմամբ ստացվածը (պտուղներ, արտադրանք, եկամուտներ) նույն կերպ, ինչպես դա իրավասու կլիներ անելու գույքի սեփականատերը (ուզուֆրուկտ)):
- Այն դեպքերում, երբ քրեական հանցագործության հետևանքով տուժողները հայցեր են ներկայացնում այն անձի դեմ, որի նկատմամբ բռնագանձման վարույթ է հարուցված, անդամ պետությունները պետք է անհրաժեշտ քայլեր իրականացնեն, որպեսզի տուժողները չզրկվեն փոխհատուցում ստանալու իրենց իրավունքից:

Արգելանքի տակ գտնվող ակտիվները, որոնց բռնագանձումը իրատեսական է, ապագայում կառավարվում են կենտրոնացված գրասենյակների կողմից կամ կենտրոնացված գրասենյակներին համապատասխանեցված մեխանիզմների միջոցով: Անհրաժեշտության դեպքում, նշյալ գրասենյակները պետք է հնարավորություն ստանան վաճառելու կամ

փոխանցելու նշյալ ակտիվները: ԵՄ անդամ երկրները թույլատրում են բռնագանձված ակտիվները օգտագործել հանրային շահին ծառայեցնելու կամ սոցիալական նպատակներով:

Նաև նշենք, որ որոշ երկրներում **կարգավորումները հետադարձ ուժ ունեն**, այսինքն in rem հայցեր կարող են հարուցվել նաև համապատասխան օրենքի ընդունումից առաջ՝ ապօրինի կերպով ձեռք բերված գույքի նկատմամբ, օրինակ՝ Կանադա:³ Որոշ երկրներում բռնագանձման **առարկա կարող է լինել նաև երրորդ անձանց պատկանող գույքը:**

Կարևոր է նաև ընդգծել, որ առանց մեղադրական դատավճռի գույքի բռնագանձումը կարող է ազդեցություն ունենալ «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայում ամրագրված այնպիսի իրավունքների վրա, ինչպիսիք են՝ *արդար դատաքննության իրավունքը, անմեղության կանխավարկածը և սեփականության ազատ օգտագործման իրավունքը*: **Ռայմոնդոն ընդդեմ Իտալիայի (Raimondo v. Italy)** գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (այսուհետ՝ ՄԻԵԴ) այն դիրքորոշումն է արտահայտել, որ **պատկան մարմինների կողմից ապօրինի կերպով ձեռք բերված գույքի նկատմամբ ժամանակավոր միջոցների կիրառումը չի հանդիսանում կոնվենցիայի խախտում**: ՄԻԵԴ-ը՝ Գոգիտիձեն և այլոք ընդդեմ Վրաստանի (Gogitidze and Others v. Georgia) գործում այն իրավական դիրքորոշումն է արտահայտել, որ **in rem ընթացակարգով գույքի բռնագանձումը չի հանդիսանում պատժիչ գործառույթ, այլ՝ ունի կանխարգելիչ բնույթ, ուստի անմեղության կանխավարկածին առնչվող դրույթները վերաբերելի չեն այս ընթացակարգերին**:

Ստորև ներկայացվող աղյուսակը ամփոփում է մի քանի երկրների՝ ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման իրավական պրակտիկան:

Աղյուսակ 1.

Երկիր	Վարույթն իրականացնող մարմին	Ապացուցման բեռի բաշխումը	Բռնագանձված գույքի կառավարումը
Կանադա	Դատախազություն	Ապացուցման բեռը որոշվում է «Հավանականությունների հավասարակշռում» սկզբունքով:	Բռնագանձված գույքը արգելանքի տակ է դրվում մինչև դատական գործընթացի ավարտը:

³ Տեղեկատվությունը հասանելի է հետևյալ հղմամբ. <https://rm.coe.int/impact-study-on-civil-forfeiture-en/1680782955>. Էջ 42: Ստորև՝ Աղյուսակ 1-ում ամփոփ կերպով ներկայացված է մի քանի երկրների՝ ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման իրավական պրակտիկան:

<p>Հարավաֆրիկյան Հանրապետություն</p>	<p>Դատախազություն</p>	<p>Ապացուցման բեռը որոշվում է «Հավանականությունների հավասարակշռում» սկզբունքով: Բռնագանձում տարածվում է այն գույքի նկատմամբ, որը հանցագործություն կատարելու գործիք է հանդիսացել կամ ձեռք է բերվել հանցագործության հետևանքով: Քրեական գործի հիման վրա մեղադրյալին արդարացնելը շատ դեպքերում հիմք չի հանդիսանում գույքի բռնագանձման վարույթը կասեցնելու համար:</p>	<p>Սկզբնական փուլում բռնագանձման ենթակա գույքը կալանքի տակ է դրվում, որից հետո սկսվում են դատավարական գործողությունները: Դատավարական գործողությունների ավարտից հետո, եթե դատարանը գույքը համարում է ապօրինի ծագում ունեցող, նշյալ գույքը տրամադրվում է «Ապօրինի ակտիվների վերականգման հիմնադրամին»:</p>
<p>Վրաստան</p>	<p>Դատախազություն</p>	<p>Դատախազական մարմինները պարտականություն ունեն ապացուցելու, որ նշյալ ակտիվները ապօրինի կամ անհիմն ծագում ունեն: Նշյալ գույքը կարող է պատկանել ներկա կամ նախկին պաշտոնյաներին, նրանց հարազատներին կամ այլ փոխկապակցված անձի:</p>	<p>Բռնագանձման ենթակա գույքը արգելանքի տակ է դրվում մինչև դատական ակտի ընդունումը:</p>
<p>Ալբանիա</p>	<p>Վարույթ իրականացնելու վերաբերյալ որոշում կարող են ընդունել դատախազությունը և դատական ոստիկանությունը: Գույքի հետագա ճակատագրի վերաբերյալ վերջնական որոշումը կայացվում է դատարանի կողմից:</p>	<p>Ապացուցման բեռը գտնվում է դատախազության վրա: Բռնագանձելու խնդրանքով դատարան դիմած մարմինը պարտավոր է ապացուցել, որ գույքը հանդիսանում է քրեական հանցագործության հետևանքով ձեռք բերված: Եթե վարույթ հարուցած մարմինը կարողանում է ապացուցել, որ ակտիվները ապօրինի ծագում ունեն, ապա ապացուցման բեռը դրվում է մյուս կողմի վրա:</p>	<p>Վերականգնված ակտիվները վերադարձվում են կամ գույքի իրական սեփականատիրոջը, կամ պետությանը:</p>

Մլովենիա	Դատախազություն	Սկզբնական փուլում ակտիվների նկատմամբ ֆինանսական հետախուզություն իրականացնելու իրավասությամբ օժտված է դատախազությունը: Եթե դատախազությանը հաջողվում է բավարար ապացույցներ հավաքագրել ակտիվների ապօրինի լինելու վերաբերյալ, ապացուցման բեռը դրվում է մյուս կողմի վրա:	Վարույթ հարուցող մարմինը, նախքան դատական ակտի կայացումը, իրավունք ունի արգելանք դնել ապօրինի ակտիվների վրա:
Միացյալ Թագավորություն	Դատախազություն	Ապացուցման բեռը որոշվում է «Հավանականությունների հավասարակշռում» սկզբունքով:	Ակտիվների պահպանումն ապահովելու նպատակով, վարույթ իրականացնող մարմնի կողմից կարող են ժամանակավոր միջոցներ կիրառվել: Բռնագրավված ակտիվները ոստիկանության կողմից կազմակերպված աճուրդի միջոցով կարող ենք վաճառվել: Վաճառքից հետո ոստիկանությունը պետք է որոշի եկամուտների բաշխման հարցը: Վաճառքից ստացված հասույթի մեծ մասը ուղղվում է Ներքին գործերի նախարարություն (Home Office)՝ վերջինիս սպասարկման որակը բարձրացնելու համար: Քրեական արդարադատության համակարգը նույնպես ստանում է խոշոր միջոցներ՝ օժանդակելու տեղական դատարանների,

			<p> ոստիկանության ծառայության, բանտերի, պրոբացիոն ծառայության աշխատակիցների գործունեության ֆինանսավորումը: Վերջերս միջոցների մի փոքր մասը ուղղվել էր «հասարակության բանկումատ» ծրագրին, որի շրջանակներում հասարակության ներկայացուցիչները հնարավորություն ունեին քվեարկել և որոշել, թե ուր պետք է ուղղվեն ստացված դրամական միջոցները: </p>
--	--	--	--

II. ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ «ԱՊՕՐԻՆԻ ԾԱԳՈՒՄ
ՈՒՆԵՑՈՂ ԳՈՒՅՔԻ ԲՈՆԱԳԱՆՁՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՑԱԼ

Վերը բերված միջազգային փորձի վերլուծության համատեքստում նշված նախագծի առնչությամբ ԻՀԱ-ն և Կոալիցիան ներկայացվում են հետևյալ դիտարկումները.

1. Այսպես, Նախագծի 19-րդ հոդվածի 5-րդ մասի իրավակարգավորումը փաստացի հնարավորություն է տալիս ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վերաբերյալ իրավասու մարմնին ցանկացած պահի դիմել համապատասխան գույքի բռնագանձման պահանջով առանց որևէ որոշակի ժամկետային կողմնորոշիչի պահպանման: Նման դատողության իրավական հիմքը՝ դրանում օգտագործվող խիստ անորոշ ու բովանդակային իմաստով անառարկա ձևակերպումն է, որի համաձայն՝ *Հայցային վաղեմության ժամկետի ընթացքը սկսվում է այն օրվանից, երբ իրավասու մարմինն իմացել է կամ պետք է իմանար ապօրինի ծագում ունեցող գույքի առկայության մասին (...):* Բնականաբար, նման իրավիճակում ինչպես տեսականում, այնպես էլ գործնականում հնարավոր են դեպքեր, երբ ցանկացած իրավիճակում հայցային վաղեմության ժամկետի հաշվարկման սկիզբը պայմանավորվի անորոշ բովանդակություն ունեցող վերացական ժամկետային ելակետերով: Հետևապես, վերը նշվածի հիման վրա, առաջարկում ենք վերաձևակերպել հիշյալ վիճահարույց կարգավորումը:

2. Բովանդակային իմաստով էականորեն խնդրահարույց է Նախագծի 25-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանվող իրավակարգավորումը, որի համաձայն՝ *Երրորդ անձանց կողմից անհատույց տրամադրված գույքը որպես օրինական եկամուտ վկայակոչելու դեպքում անձը կրում է գույքը տրամադրած անձի կողմից դրա ձեռքբերման օրինականությունը ապացուցելու պարտականություն:* Հիշյալ իրավակարգավորման բովանդակությունից ստացվում է, որ ցանկացած պարագայում հենց երրորդ անձի վրա է դրվում մեկ այլ անձի օբյեկտիվ իմացության տիրույթում գտնվող, երբեմն նաև օբյեկտիվ պատճառներով ապացուցման տեսակետից *(անձի մահ, ապացույցների կորուստ, տիրող հանրային հարաբերությունների կազմակերպման միջավայր և այլն)* անհնար համարվող հանգամանքների ապացուցման ամբողջ բեռն ու ծանրությունը դրանից բխող բոլոր անբարենպաստ հետևանքներով, ներառյալ՝ այն հանգամանքի համատեքստում, որ այս պարագայում գործում է գույքի ապօրինի ծագում ունենալու կանխավարկածը և վերը նշված բոլոր անբարենպաստ

հանգամանքների հետևանքները կրում է պատասխանողը: Հետևապես, առաջարկում ենք հրաժարվել այս վիճահարույց կարգավորումից:

3. Չափազանց լուրջ մտավախություն է առաջացնում նաև Նախագծի 14-րդ հոդվածի 10-րդ մասով առաջարկվող փոփոխությունը, որի համաձայն՝ *սույն օրենքի հիման վրա գույքի բռնագանձման հայցադիմումը պետք է ներկայացվի ոչ ուշ, քան վեցամսյա ժամկետում՝ սկսած այն օրվանից, երբ դիմողն ստացել է հայցի նախնական ապահովման միջոցներ կիրառելու մասին դատարանի որոշումը*: Արդյունքում ստացվում է այնպես, որ պատասխանողի սեփականություն համարվող գույքը շուրջ վեց ամիս կարող է գտնվել սոսկ հայցի ապահովման ներգործության ներքո՝ առանց իր նկատմամբ ներկայացված որևէ հայցապահանջի: Ընդ որում, նշված իրավիճակի դեմ պայքարի որևէ՝ գործնականում իրատեսական պաշտպանության երաշխիք անձին վերապահված չէ: Հետևապես, առաջարկում ենք սահմանել նշված դեպքերում դատարան դիմելու առավել կարճ ժամկետ:

4. Ըստ նախագծի՝ *ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման նպատակով համապատասխան ընթացակարգի նախաձեռնումը վերապահված է իրավասու մարմնին՝ ՀՀ գլխավոր դատախազությանը*: Ակնհայտ է նաև, որ Հայաստանի Հանրապետության դատախազությանը նման լիազորությամբ օժտելն ուղղակիորեն հակասում է ՀՀ Սահմանադրության 176-րդ հոդվածի 3-րդ մասով առաջարկվող իրավակարգավորմանը, որի համաձայն՝ *Դատախազությունն օրենքով սահմանված բացառիկ դեպքերում և կարգով պետական շահերի պաշտպանության հայց է հարուցում դատարան*: Հիշյալ իրավակարգավորման բովանդակությունից ուղղակիորեն բխում է, որ դատախազության՝ պետական շահի պաշտպանության հայցի հարուցման իրավասությունը կարող է կենսագործվել խիստ սահմանափակ՝ օրենքով սահմանված բացառիկ դեպքերում: Հիշյալ դեպքերն ուղղակիորեն և սպառնիչ լրիվությամբ թվարկված են «Դատախազության մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի 2-րդ մասում (*հայց ներկայացնելու առաջարկություն ստանալուց հետո ողջամիտ ժամկետում իրավասու մարմինը հայց չի ներկայացրել, կամ պետական շահերի խախտում է տեղի ունեցել այն հարցերով, որոնցով հայց ներկայացնելը օրենսդրությամբ վերապահված չէ որևէ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի*), որոնց վերլուծությունից ուղղակիորեն բխում է, որ դրանք իսկապես բացառիկ են: Մինչդեռ, ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման հայցի հարուցումն օբյեկտիվորեն կարող է իրականացվել ՀՀ-ում գործող բազմաթիվ մարմինների կողմից և այս պարագայում առկա չէ բացառիկության որևէ հատկանիշ:

Հետևապես, առաջարկում ենք բացառել դատախազության իրավասությունից այս վարույթի իրացումը:

5. Նախագծի 2-րդ հոդվածի 2-րդ մասն ամրագրում է, որ *եթե սույն օրենքով սահմանված են այլ կանոններ, քան Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքով, ապա ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարույթի քննությունն իրականացվում է սույն օրենքով սահմանված կանոններով*: Ակնհայտ է, որ քննարկվող օրենքով սահմանված վարույթն ինքնին քաղաքացիական դատավարություն է, ուստի՝ «քաղաքացիական դատավարությունում սահմանել մեկ այլ քաղաքացիական դատավարություն» սկզբունքորեն անընդունելի է՝ առաջին հերթին օրենքի կարգավորման ինքնուրույն առարկաների համարժեք սահմանազատման տեսակետից: Հետևապես, առաջարկում ենք որդեգրել քաղաքացիական դատավարության օրենսգրքի և նշված օրենքի միջև իրավական հարաբերակցությունը որոշակիացնելու այլ՝ ողջամտորեն հիմնավորված կարգ:

6. Նախագծի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը «գույք» հասկացության մեջ է ներառում նաև *կրիպտոակտիվները*, որպիսիք ՀՀ-ում դեռևս որևէ օրենսդրական ակտով սահմանված չեն: Սրանով ուղղակիորեն խախտում է «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքով սահմանված իրավակարգավորումն առ այն, որ ցանկացած նոր հասկացություն սահմանելիս օրենքը պետք է ուղղակիորեն որոշակիացնի դրա բովանդակային ելակետերը: Հետևապես, առաջարկում ենք Նախագծի փաթեթով հստակորեն սահմանել մեր օրենսդրությամբ չբացահայտվող նշված եզրույթը:

7. Թեպետ միջազգային փորձը ցույց է տալիս, որ **«Հավանականությունների հավասարակշռում» սկզբունքը** տարածում ունի տարբեր երկրներում, այդուհանդերձ գտնում ենք, որ այս սկզբունքի կիրառումը որոշակի ռիսկեր է պարունակում: Նախագծում այս սկզբունքը սահմանված է 3-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետում: **«Հավանականությունների հավասարակշռում» եզրույթը՝ ապացուցողական չափանիշ է, որով փաստը համարվում է հաստատված կամ հերքված, եթե դրա առկայությունը կամ բացակայությունը ավելի հավանական է: Այսպես, բանն այն է, որ հիշյալ հասկացությունը որևէ կերպ չի կարգավորում այն հարցը, թե դատավարության մասնակիցներից ո՞վ է կրելու կոնկրետ ապացույցներ ներկայացնելու պարտականությունն ու ապացուցման բեռը, որոնք տարբեր են ինչպես՝ ՀՀ**

օրենսդրությամբ, այնպես էլ՝ ՀՀ վճռաբեկ դատարանի նախադեպային պրակտիկայում: Ակներն է, որ փաստը հենց այնպես չի կարող համարվել հերքված կամ հաստատված, իսկ պատասխանողը դիտարկվել որպես փաստի չապացուցման անբարենպաստ հետևանքը կրող՝ բացառապես այն հանգամանքի ուժով, որ տվյալ գույքի ձեռքբերումը չի հիմնավորվում օրենքով սահմանված ընթացակարգով: Առաջարկում ենք հստակորեն որոշակիացնել՝ ով է կրում այս պարագայում ապացույցներ ներկայացնելու պարտականությունը և պատասխանողի համար անբարենպաստ հետևանքների ծագումը պայմանավորել բացառապես այն պարագայում, երբ օբյեկտիվորեն և բանականորեն (ողջամտորեն) հնարավոր է գույքի ձեռքբերման մասին համապատասխան ապացույցը ներկայացնել:

8. Նախագծի 3-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետով պաշտոնատար անձին տրված իրավական բնորոշումը պարունակում է որոշակի ռիսկեր: Մասնավորապես, դրա շրջանակներում ուղղակիորեն ընդգծվել է, որ *պաշտոնատար անձ է համարվում ուսումնասիրությունը նախաձեռնելու պահին գործող «Հանրային ծառայության մասին» օրենքի խնամքով հանրային պաշտոն զբաղեցնող կամ զբաղեցրած անձ կամ այդպիսի պաշտոնին համարժեք պաշտոն զբաղեցրած անձը: Մինչդեռ, *ակներև է, որ Նախագծի իրավակարգավորման շրջանակներում առկա չէ որևէ դրույթ, որը կորոշակիացնի հանրային պաշտոն զբաղեցնող անձին համարժեք պաշտոն հասկացությունը*: Ներպետական օրենսդրությամբ նշված հասկացության իրավական ելակետերը սահմանող որևէ բնորոշում առկա չէ: Ուստի, առաջարկում ենք հրաժարվել իրավական որոշակիության հատկանիշից զուրկ այս ձևակերպումներից:*

9. Բովանդակային տեսակետից գրեթե ամբողջությամբ նույնանում են Նախագծի 6-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով սահմանված իրավակարգավորումները: Երկուսի պարագայում էլ խոսքն ըստ էության, վերաբերում է նոր կամ նոր երևան եկած հանգամանքի հիմքով ուսումնասիրության վերսկսմանը: Հետևապես, գտնում ենք, որ անհրաժեշտ է հստակ տարանջատել հիշյալ կարգավորումների գործողության առարկայական սահմանները:

10. Իրավասու մարմնի համար անհարկի վարչական հայեցողություն է գեներացնում նաև Նախագծի 7-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված իրավակարգավորումը, որը, փաստացի հնարավորություն է տալիս սկսել ուսումնասիրություն նաև տասը տարուց ավելի ժամանակահատվածի կտրվածքով այն դեպքերում, երբ հիմնավորվում է, որ այդ ժամանակահատվածում ձեռքբերված գույքի առնչությամբ ապացույցներն առկա են և հասանելի: Բանն այն է, որ այդ հանգամանքի գնահատման ողջ գործընթացն ինքնին գտնվում է

իրավասու մարմնի հայեցողության շրջանակներում, իսկ դրա ոչ պատշաճ իրացման հետևանքը Նախագծի կարգավորումների համաձայն, կրում է պատասխանողը:

Ավելին, Նախագծի կարգավորման տրամաբանությունից ուղղակիորեն բխում է, որ մինչև տասը տարվա ժամանակն ընդգրկող ուսումնասիրության դեպքում բոլորովին էլ պարտադիր չէ գույքի առնչությամբ ապացույցներն առկայության և հասանելիության օրենսդրական պահանջի պահպանվածության հարցը: Հետևապես, առաջարկում ենք հրաժարվել այս վիճահարույց կարգավորումից:

11. Իրավակիրառ լուրջ խնդիրներ կարող է առաջացնել նաև ուսումնասիրության *անհարկի երկարացված ժամկետները*: Մասնավորապես, համաձայն՝ Նախագծի 8-րդ հոդվածի ուսումնասիրությունը կարող է տևել առավելագույնը երկու տարի: Անհասկանալի է՝ էթե ուսումնասիրությունը չի պահանջում միջազգային հարցումների իրականացման անհրաժեշտություն, ինչո՞վ է հիմնավորվում այդպիսի երկար ժամկետի սահմանումը: Առաջարկում ենք ներկայացնել համապատասխան հիմնավորում, իսկ դրա բացակայության դեպքում հրաժարվել այս անհիմն կարգավորումից:

12. Առաջարկում ենք հստակ սահմանել այն պատասխանատվությունը, որն անհրաժեշտաբար պետք է կիրառվի Նախագծի 9-րդ հոդվածին համապատասխան իրականացված ուսումնասիրության արդյունքում ստացված տվյալների հրապարակման համար:

13. Նախագծի 12-րդ հոդվածի 5-րդ մասով առաջարկվող իրավակարգավորումը փաստացի դատարանին *գրեթե պարտավորեցնում է* բոլոր դեպքերում բավարարել համապատասխան գաղտնիք պարունակող տեղեկություններ պահանջելու վերաբերյալ ստացվող դիմումները: Հիշյալ հոդվածի իմաստով դիմումի բավարարման մասին որոշման կայացման համար ընդամենն անհրաժեշտ է հավաստիանալ, որ դիմումում արձանագրված տվյալներն անհրաժեշտ են ուսումնասիրության համար որոշակի փաստերի հաստատման նպատակով: Մինչդեռ, նման ցածր ապացուցողական շեմի սահմանումը որևէ կերպ համադրելի չէ համարժեք հիմնավորված դատական ակտ ստանալու կոնվենցիոնալ սկզբունքին: Հետևապես, առաջարկում ենք վերաձևակերպել այս վիճահարույց կարգավորումը, նախատեսելով ապացուցողական ողջամիտ և ընդունելի շեմ:

14. Մտահոգիչ է Նախագծի 14-րդ հոդվածի 7-րդ մասը, որի համաձայն՝ *Դատարանը կիրառում է հայցի ապահովման միջոցներ, եթե դիմումը և դրան կից ներկայացվող փաստաթղթերը պարունակում են տվյալներ, որոնք բավարար հիմք են տալիս ենթադրելու, որ անձին պատկանում է ապօրինի ծագում ունեցող գույք և նման միջոցներ չձեռնարկելը կարող է անհնարին դարձնել, դժվարացնել դատական ակտի կատարումը, հանգեցնել վեճի առարկա հանդիսացող գույքի փաստացի կամ իրավական վիճակի փոփոխության*: Հիշյալ իրավակարգավորումից ուղղակիորեն բխում է, որ դեռևս հայցի ապահովման փուլում, փաստորեն, դատարանն արդեն իսկ գնահատական է տալու այն փաստի մասին, որ առկա է ապօրինի ծագում ունեցող գույք: Բնականաբար, նշված փաստի դատական կարգով հաստատման պարագայում ակնկալել արդարադատության հետագա շարժընթացի օբյեկտիվությունը ողջամտորեն իրատեսական չէ, և նման իրավակարգավորումն ըստ էության, դատարանին դնելու է իրավասու մարմնի ներկայացրած «հայցերը դակողի» կարգավիճակում: Առաջարկում ենք հրաժարվել այս վիճահարույց կարգավորումից:

15. Նախագծի 18-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ *Ուսումնասիրությունը կարող է ավարտվել հաշտության համաձայնության կնքմամբ, որը պետք է համապատասխանի սույն օրենքի 23-րդ հոդվածով նախատեսված պայմաններին և հաստատվի դատարանի կողմից նույն հոդվածով նախատեսված կարգով*: Բանն այն է, սակայն, որ այս տեսակի վարույթներով էականորեն կարևորվում է հաշտության համաձայնության գործընթացի պատշաճ սահմանումը, որն այսուհանդերձ, չի կարող կրել հայեցողական բնույթ: Հիշյալ իրավադրություն «կարող է ավարտվել» բառերը հնարավորություն են տալիս չկնքել հաշտության համաձայնություն ներառյալ այն դեպքերում, երբ առկա են օրենսդրորեն պահանջվող բոլոր վավերապայմանները: Դրանով պայմանավորված՝ առաջարկում ենք հստակորեն և առանց անհարկի հայեցողական բաղադրիչի ամրագրել հաշտության համաձայնության կնքումը վարույթի այս տեսակի պարագայում:

16. Խիստ մտահոգիչ է նաև Նախագծի 24-րդ հոդվածում ամրագրված արագացված դատաքննության կիրառման իրավական հիմքերը: Նշված դրույթը հնարավորություն է տալիս կիրառել արագացված դատաքննություն այն դեպքերում, երբ հրապարակային ծանուցման տեղադրման պահից սկսած 4 ամսվա ընթացքում շահագրգիռ ոչ մի անձ գրավոր չի վիճարկում գույքի բռնագանձումը: Նման իրավակարգավորման պարագայում փաստացի կարող է ստացվել

այնպես, որ անձն առանց իրազեկման, առանց արդարադատության բովանդակային իրացման գրկվի իր սեփականությունը հանդիսացող գույքից: Առաջարկում ենք հրաժարվել հիշյալ իրավակարգավորումից: Նկատի ունենալով այսօրինակ գործերի քննության առանձնահատկությունները՝ առաջարկվում է նաև դրանց համար սահմանել ի պաշտոնե քննության կառուցակարգեր:

17. Նախագծով նախատեսվող վարույթը կարգավորող նորմերի վերլուծությունից ուղղակիորեն բխում է, որ այն ըստ էության, քաղաքացիական դատավարությունում կենսագործվող ինքնուրույն վարույթի տեսակ է, որի կապակցությամբ առանձին օրենքի ընդունումը փաստացի հակասում է այն գաղափարին քաղաքացիական դատավարության իրականացման կարգը սահմանվում է քաղաքացիական դատավարության օրենսգրքով: Կարծում ենք՝ նշված խնդիրը լուծելու համար հիշյալ ինստիտուտն անկհայտորեն կարող էր նախատեսվել «Դատախազության մասին» ՀՀ օրենքով, իսկ դրան վերաբերող դատավարական նորմերը՝ քաղաքացիական դատավարության օրենսգրքով:

18. Խնդրահարույց է նաև Նախագծի 26-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված իրավական տրամաբանությունը, ըստ որի *Պատասխանողին պատկանող գույքի նկատմամբ նրա հետ չփոխկապակցված անձի գույքային իրավունքները, բացառությամբ սեփականության իրավունքի, գույքի բնագանձումից հետո պահպանվում են ՀՀ քաղաքացիական օրենսգրքով նախատեսված կարգով և դեպքերում, եթե հայցվորի կողմից չի ապացուցվում, որ այդ իրավունքները ծագելու պահին անձը գիտեր կամ ողջամտորեն կարող էր իմանալ գույքի՝ ապօրինի ծագում ունենալու մասին:* Նման պայմաններում փաստորեն, ստացվում է, որ կարելի է առանց որևէ խնդրի, մինչև օրենքի ընդունումն ընկած ժամանակահատվածը կամ դրանից հետո գրավ դնել ենթադրյալ ապօրինի ծագում ունեցող գույքը չփոխկապակցված որևէ անձի մոտ և հետագայում դրա հնարավոր բնագանձումը դադարեցնել այն հիմքի ապացուցմամբ, որ գրավի իրավունքը ծագելու պահին գրավառուն չգիտեր կամ ողջամտորեն չէր կարող իմանալ գույքի՝ ապօրինի ծագում ունենալու մասին: *Սա որևէ կերպ չի բխում կոռուպցիայի դեմ իրական պայքար մղելու ռազմավարական առաջնահերթություններից:* Առաջարկում ենք հրաժարվել այս վիճահարույց կարգավորումից:

19. Նախագծի 27-րդ հոդվածի 2-րդ մասում ամրագրված նորմի վերլուծությունից ուղղակիորեն բխում է, որ *Բնագանձված գույքը ուղղվում է պետական բյուջե, իսկ եթե առկա են*

անձինք, ում իրավունքները խախտվել են ապօրինի ծագում ունեցող գույքի ձեռքբերմամբ և ուրիշեր ունեն իրավունքներ համապատասխան գույքի նկատմամբ, բռնագանձված գույքը վերադարձվում է նրանց: Փաստորեն, ստացվում է, որ սույն վարույթի շրջանակներում դատախազության կողմից հայցի հարուցումն ընդգրկում է ոչ միայն պետական շահի պաշտպանությունը, այլ նաև երրորդ անձանց իրավունքների պաշտպանությամբ դատարան դիմելու իրավագործությունը, որը որևէ կերպ չի ներառվում դատախազության սահմանադրական իրավասության տիրույթում: Հետևապես, առաջարկում ենք վերացնել Սահմանադրության, այլ իրավական ակտերի և այս կարգավորման միջև առկա հակասությունները:

20. Առաջարկում ենք Նախագծի 28-րդ հոդվածի 3-րդ մասում ամրագրված վավերապայմանները միմյանցից տարանջատել ոչ թե ստորակետով, այլ բաժանված կետերով այնքանով, որքանով ակնհայտ է, որ դրա կիրառման համար բավարար է թվարկված պայմաններից անգամ մեկի առկայությունը:

21. Առաջարկում ենք նաև Նախագծի 29-րդ հոդված իրավակարգավորման առարկայի շրջանակներում հստակեցնել գույքի՝ պետության տիրապետությանն անցնելու կոնկրետ պահը:

**Իրավաբանների հայկական ասոցիացիա,
Հայաստանի ՔՀԿ-ների հակակոռուպցիոն կոալիցիա
«24» սեպտեմբերի, 2019թ.**